

Ծ ա ն ու ց ու մ
Բարձրագույն դատական խորհրդի նիստերի
ժամանակի և վայրի մասին

Տեղեկացվում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի միջնորդությունների քննությունը Բարձրագույն դատական խորհրդում տեղի կունենա 2019 թվականի հունվարի 24-ին ժամը 11.⁰⁰-ին և 14.³⁰-ին ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում:

Տեղեկացվում է նաև, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ՀՀ արդարադատության նախարարի միջնորդության քննությունը Բարձրագույն դատական խորհրդում տեղի կունենա 2019 թվականի փետրվարի 4-ին ժամը 11.⁰⁰-ին ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքում: